Հայտարարություն

«Երևանի Ստ. Լիսիցյանի անվան հ.34 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «Մաթեմատիկա» (5 դասաժամ), «Հայոց լեզու և գրականություն» (8 դասաժամ), «Ռուսաց լեզու»(12 դասաժամ), ՀԵՊ (4 դասաժամ), «Կերպարվեստ» (8 դասաժամ) և «Ֆիզիկա» (8 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1), մեկ լուսանկար 3 x 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ (ձև 5),
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
- ինքնակենսագրություն,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում,
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2023թ. սեպտեմբերի 08-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. սեպտեմբերի 12-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի Ստ. Լիսիցյանի անվան հ. 34 հիմնական դպրոցում:

Հասցեն՝ ք.Երևան, Տիգրան Մեծի 38:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (010)55-01-70 հեռախոսահամարով: